



# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆ ԱԳՐՈՒԹՅՈՒՆԻ Ց

22 օգոստոսի 2013 թվականի N 33

8. «ԿԱՅՈՒՆ ԴԱՅՐՈՑԱԿԱՆ ՄՆՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի նիստի N 52 արձանագրային որոշման 37-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝

1. Հավանություն տալ՝

1) «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությանն ու դրա իրականացման միջոցառումների ծրագրին՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Կայուն դպրոցական սնունդ» փորձնական ծրագրին՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն արձանագրային որոշմամբ նախատեսվող «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարության և փորձնական ծրագրի 2014-2016 թթ. միջոցառումներն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսելու հնարավորության հարցը քննարկել Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի կազմավորման գործընթացով նախատեսված ժամկետներում:

3. Սահմանել, որ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում ընդգրկվող երեխաների թիվը ենթակա է ճշտման յուրաքանչյուր տարի՝ նոր ուսումնական տարվա փաստացի կոմպլեկտավորման արդյունքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈՒՏՎԱՐՉԱՊԵՏ

2013 թ. օգոստոսի 3  
Երևան

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

